ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

3 ՀՈՒՆԻՍԻ 2025 թվականի N 127 Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԱՃՈՒՐԴ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով Եղեգիս համայնքի ավագանու 20/12/2024թ. թիվ 139Ա, 28/02/2025թ. թիվ 25Ա, 28/02/2025թ. թիվ 26Ա որոշումները, հիմք ընդունելով 30/05/2025թ. արձանագրությունը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Հայտարարություն տալ Առավոտ օրաթերթում հողամասերի՝ աճուրդով օտարելու նպատակով հետևյալ բովանդակությամբ՝ «2025 թվականի մայիսի 30-ին ժ. 10:00-ին նախապես հայտարարված համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության ներքոհիշյալ հողամասերի աճուրդը չի կայացել հանձնաժողովի անդամների կեսից ավելիի բացակայության պատճառով:

Համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի, ստորև ներկայացված գյուղատնտեսական նշանակության հողամասերի համար աճուրդը կայանալու է 2025 թվականի հունիսի 9-ին ժամը 10:00-ին ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիսի համայնքապետարանի շենքում, փողոց 1, շենք 1 հասցեում.

1)Հորս գյուղ, գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով, մեկ լոտ, գյուղատնտեսական նշանակության վարելահող, այլ հողատեսք, կադաստրային ծածկագիր՝ 10-031-0107-0027, մակերեսը՝ 0,54761հա, որից՝ վարելահող 0,34139հա, այլ հողատեսք 0,20622հա:

Վարելահող, այլ հողատեսք, կադաստրային ծածկագիր՝ 10-031-0107-0028, մակերեսը՝ 1,32406հա, որից՝ վարելահող 0,62561հա, այլ հողատեսք 0,69845հա:

Այլ հողատեսք, կադաստրային ծածկագիր՝ 10-031-0109-0009, մակերեսը՝ 0,31հա:

Վարելահող հողատեսք, կադաստրային ծածկագիր՝ 10-031-0107-0030, մակերեսը՝ 0,42հա:

Մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 100 (մեկ հարյուր) %-ի չափով (536 235 (հինգ հարյուր երեսունվեց հազար երկու հարյուր երեսունհինգ) ՀՀ դրամ):

2)Շատին գյուղ, գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով, մեկ լոտ, գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք, կադաստրային ծածկագիր՝ 10-035-0247-0027, մակերեսը 0,19556հա, մեկ լոտ:

Մեկնարկային գին սահմանել 30 000 (երեսուն հազար) ՀՀ դրամի չափով:

3)Հերմոն գյուղ, գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով, մեկ լոտ, գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք.

կադաստրային ծածկագիր 10-029-0108-0003, մակերեսը 0,66հա, մեկ լոտ:

Մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 200 (երկու հարյուր) տոկոսը (89100 (ութսունինը հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ):

Աճուրդի մասնակցության հայտերի ընդունման վերջնաժամկետը ավարտվել է 2025 թվականի մայիսի 23-ին, ժամը՝ 18:00-ին, նախավճարի չափը սահմանվել մեկնարկային գնի 50 տոկոսի չափով, քայլի չափը հաշվարկվել է մեկնարկային գնի 5%-ի չափով: Հողամասերն ապահովված են մոտեցման ճանապարհով, հողամասերում ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքներ առկա չեն և հողամասերի նկատմամբ սահմանափակումներ, սերվիտուտներ չկան: Մասնակցության համար ներկայացվել է հայտ, անձնագրի պատճեն, մասնակցության վճարի անդորրագիր: Մասնակցության վճարի չափը՝ 10 000 դրամ:»:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ԱՇՈՏՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

2025 թ. հունիսի 3 հ.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

5 ՀՈՒՆԻՍԻ 2025 թվականի N 128 Ա

ՀԱՆԳՈՒՅՑԱԼ ՎԱՐԴԱՆՈՒՇ ԵՂՅԱ ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆԻ ԵՎ ՆՐԱ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն որոշման դրույթները, կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի 10012ZSXKBAY և 10012BSTPMDT քաղվածքները

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Եղեգիս համայնքի Շատին գյուղի նախկին բնակչուհի, հանգուցյալ Վարդանուշ Եղյա Գյուլնազարյանի (ընտանիքի գլխավորը) և նրա ընտանիքի անդամներ՝ Նորիկ Ռազմիկի Գյուլնազարյանի (տղան), Մարջանիկ Շաշայի Նազարյանի (հարսը), Կարեն Նորիկի Գյուլնազարյանի (թոռը), Գարիկ Նորիկի Գյուլնազարյանի (թոռը) սեփական բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին (կադաստրային ծածկագիր՝ 10-035-0006-0003, մակերեսը 0,105հա) տրամադրել Եղեգիս համայնք, Շատին գյուղ, 20-րդ փողոց, թիվ 29 հասցեն:

2.Եղեգիս համայնքի Շատին գյուղի նախկին բնակչուհի, հանգուցյալ Վարդանուշ Եղյա Գյուլնազարյանի (ընտանիքի գլխավորը) և նրա ընտանիքի անդամներ՝ Նորիկ Ռազմիկի Գյուլնազարյանի (տղան), Մարջանիկ Շաշայի Նազարյանի (հարսը), Կարեն Նորիկի Գյուլնազարյանի (թոռը), Գարիկ Նորիկի Գյուլնազարյանի (թոռը) սեփական բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին (կադաստրային ծածկագիր՝ 10-035-0032-0007, մակերեսը 0,197հա) տրամադրել Եղեգիս համայնք, Շատին գյուղ, 2-րդ փողոց, թիվ 15 հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ԱՇԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

2025 թ. հունիսի 5 ք.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 ՀՈՒՆԻՍԻ 2025 թվականի N 129 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՏԻՆ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻ ՌԻՄԱ ՊԱՎԼՈՒՇԻ ԽԱՆՈՅԱՆԻ ԵՎ ՆՐԱ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՓԱՍՏԱՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 726,1ՔՄ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 26/12/2002թ. «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՕ-510-Ն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասի, 60-րդ հոդվածի 4-րդ մասի, 73-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի ղեկավարի տեղակալի 22-ը մայիսի 2025թ. N ՆՂ/9829-2025 գրությունը (մտից 838)

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Ճանաչել քաղաքացի Ռիմա Պավլուշի Խանոյանի և և նրա ընտանիքի անդամներ՝ Դավիթ Վովայի Խանոյանի (որդին), Մհեր Վովայի Խանոյանի (որդին), Արա Վովայի Գրիգորյանի (որդին) սեփականության իրավունքը փաստացի ավել օգտագործվող 726,1ք/մ մակերեսով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ (կադաստրային ծածկագիր՝ 10-035-0009-0046):

2.Ավել օգտագործվող 726,1ք/մ բնակավայրերի նշանակության հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, և այդ իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի առաջացնում սերվիտուտ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ԱՇՈՏՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

2025 թ. հունիսի 5 հ.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 ՀՈՒՆԻՍԻ 2025 թվականի N 130 Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՃՈՒՐԴ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-70-րդ հոդվածների պահանջներով, հիմք ընդունելով Եղեգիս համայնքի ավագանու 29/04/2025թ. թիվ 57Ա որոշումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

Հայտարարություն տալ Առավոտ օրաթերթում հողամասի՝ աճուրդով օտարելու նպատակով հետևյալ բովանդակությամբ՝ «2025 թվականի հուլիսի 10-ին ժամը 10:30-ին Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիսի համայնքապետարանի շենքում կկայանա աճուրդ Եղեգիս համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի համար (գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով)՝

1)Շատին գյուղ, գյուղատնտեսական նշանակության վարելահող, այլ հողատեսք, կադաստրային ծածկագիր 10-035-0268-0007, մակերեսը՝ 1,20729հա, որից 0,3173հա այլ հողատեսք և 0,88999 հա 4-րդ կարգի անջրդի վարելահող:

Մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 120 (մեկ հարյուր քսան) %-ի չափով (վարելահողի համար 349767 (երեք հարյուր քառասունինը հազար յոթ հարյուր վաթսունյոթ) ՀՀ դրամ, այլ հողատեսքի համար՝ 25702 (քսանհինգ հազար յոթ հարյուր երկու) ՀՀ դրամ:):

Աճուրդի մասնակցության հայտերի ընդունման վերջնաժամկետը 2025 թվականի հուլիսի 4-ին, ժամը՝ 18:00-ին, նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 50 տոկոսի չափով, քայլի չափը հաշվել մեկնարկային գնի 5%-ի չափով: Հողամասն ապահովված է մոտեցման ճանապարհով, հողամասում ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքներ առկա չեն և հողամասի նկատմամբ սահմանափակումներ, սերվիտուտներ չկան: Մասնակցության համար անհրաժեշտ է ներկայացնել հայտ, անձնագրի պատճեն, մասնակցության վճարի անդորրագիր: Մասնակցության վճարի չափը՝ 10 000 դրամ:»:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

2025 թ. հունիսի 6 ք.Եղեգիս